

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ



ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

06.06.2017թ. N 06 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

2301, ք. Հրազդան, Սահմանադրության Հրապարակ, 1
 (0223) 2-23-45, info@hrazdan.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հունիսի 2017 թվականի N 53

ՀՐԱԶԴԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 6-Ի
N6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի.

Հրազդան համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հրազդան համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 6-ի N6 արտահերթ նիստի օրակարգը.

1. Հրազդան համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 20-ի N 175-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
3. Հրազդան համայնքի 2017 թվականի բյուջեի ֆոնդային մասի պահուստային ֆոնդից գումար հատկացնելու մասին
4. Օգնություն հատկացնելու մասին
5. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերն աճուրդային կարգով օտարելու մասին
6. Հրազդան համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերը ոչ մրցութային կարգով կառուցապատման իրավունքով օգտագործման տրամադրելու մասին
7. Իրավաբանական անձին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նպատակային նշանակության 1.4999 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության մասին

Կողմ -12

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎՈԼՈՂՅԱ

2. ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԻԿ

3. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ

